ՍԱՄՎԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

# ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԱՆՏԱՆՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Փորձենք լուսաբանել քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը կանխելու հնարավորություններից մեկը: Հայ պատմագրության մեջ ընդունված տեսակետ է, որ Առաջին համաշխարհային պատերազմի պայմաններում Անտանտի երկրները չէին կարող կանխել հայոց ցեղասպանությունը, քանի որ պատերազմի մեջ էին Օսմանյան կայսրության դեմ եւ զրկված էին նրա վրա ներազդելու հնարավորությունից: Այդ տարածված տեսակետը ճշմարտությանը համապատասխանում է միայն մասնակիորեն:

Մասնավորապես անդրադառնանք հայ ժողովրդի մեծ ողբերգությունը կանխելու՝ Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի բաց թողած իրական հնարավորությանը: Հարցի առանձին կողմերին անդրադարձել են պատմաբաններ Ե. Գասպարյանը[1] եւ Տ. Սարուխանյանը[2]: Առաջինը բավական մանրամասնորեն լուսաբանել է Ֆրանսիայի, երկրորդը՝ Բրիտանիայի վարած քաղաքականությունը եւ ծրագրերը: Մեզ հետաքրքրում են ոչ միայն այդ երկրների քաղաքականությունը եւ ծրագրերը Կիլիկիայում, այլ նաեւ հայկական առաջարկները Անտանտին եւ դրանց հետագա ճակատագիրը: Վերջին խնդիրը գրեթե չի լուսաբանվել հայ պատմագրության մեջ:

Պատերազմի տարիներին Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի կողմից թուրքական իշխանությունների իրականացրած վայրագությունները դադարեցնելու քաղաքական կոչերն ու դրանց դատապարտումը, իհարկե, չէին կարող կանգնեցնել թուրք ցեղասպաններին, որոնք հակառակ ճամբարում էին գտնվում: Չպետք է մոռանանք, որ Մեծ եղեռնը ***«մարդկության եւ քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն»*** է որակվել դեռեւս 1915թ. մայիսի 24-ին Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Մեծ Բրիտանիայի կառավարությունների համատեղ հայտարարության մեջ: Այդ հանցագործության համար պատասխանատու էին համարվում օսմանյան կառավարության բոլոր անդամները եւ նրանք, ովքեր ներգրավված կլինեին կոտորածներում[3]:

Քաղաքական հայտարարություններով, սակայն, ինչպես ցույց է տվել պատմությունը, թուրքերի ջարդարարական բնազդների վրա ոչ ոք երբեւէ չի կարողացել ազդել: Ջարդերը դադարեցնելու պահանջով 1915 թ. թուրքական իշխանություններին էին դիմել նաեւ ԱՄՆ-ի, Իսպանիայի, Իտալիայի, Բուլղարիայի դիվանագիտական ներկայացուցիչները, Հռոմի Բենեդիկտոս XV պապը[4], սակայն այդ կոչերը նույնպես մնացել էին անպատասխան:

---

1 Ե. Գասպարյան, Ֆրանսիան եւ Մեծ եղեռնը (1915-1918թթ.), Եր., 2000:

2 Տ. Սարուխանյան, Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում եւ Մեծ Բրիտանիան (1915-1918թթ.), Եր., 2005:

3 Տե՛ս Ա. Պեյլերյան, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը եւ հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատ. I, Եր., 2005, էջ 99:

4 **Լ. Հովհաննիսյան**, Հայկական հարցը եւ մեծ տերությունները 1914-1917թթ., Եր., 2002, էջ 60:

Անտանտի երկրները ցեղասպանությունը կանխելու միայն մեկ միջոց ունեին՝ ռազմական միջամտությունը: Օրինակ, Արևմտյան Հայաստանում ռուսական զորքերի առաջխաղացման հետևանքով հարյուրհազարավոր հայեր փրկվեցին անխուսափելի թվացող ոչնչացումից: Սակայն ռուսական բանակը, հանդիպելով թուրքերի համառ դիմադրությանը, շատ դանդաղ էր առաջանում դեպի Հայաստանի խորքերը:

Եթե Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը որոշ չափով կարող էր հույսեր փայփայել ռուսական բանակների առաջխաղացման հետ, ապա Կիլիկիայի եւ հարակից տարածքների հայությունը զրկված էր նաեւ այդ հնարավորությունից: Կիլիկիային կարող էին օգնության գալ միայն բրիտանա-ֆրանսիական ուժերը՝ ափհանում կատարելով Միջերկրականի հյուսիսարեւելյան ափին գտնվող հայկական այդ երկրամասում:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից հնարավոր էր, իսկ Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից եւ տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնել: Լավագույն տարբերակը Կիլիկիայում բրիտանական կամ ֆրանսիական զորքերի ափհանումը եւ նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատագրելն էր: Պետք է նշել, որ տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվելու Անտանտի բանակների կողքին: Կիլիկիայում հայկական ապստամբությունը եւ դաշնակիցների օգնությամբ ազատագրվելը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաեւ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Սակայն ավելի կարեւոր է այն հանգամանքը, որ Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաեւ մյուս վայրերում, որի հետեւանքով թուրքերը ի վիճակի չէին լինի իրականացնել Հայոց մեծ եղեռնն իր ամբողջ ահավորությամբ:

Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ գործիչները սկսած 1914 թ. վերջերից բազմիցս դիմեցին Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Բրիտանիայի ղեկավար շրջաններին: Այդ հարցով զբաղվող առաջին գործիչներից էր Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան: Նրան անհանգստացնում էր Կիլիկիայի հայ բնակչության ճակատագիրը, որին սպառնում էր ջարդերի վտանգը, քանի որ ռուսական բանակները չէին կարող նրանց օգնության հասնել:

Կիլիկիահայությանը փրկելու մտահոգությամբ, նա 1914 թ. նոյեմբերի սկզբին դիմեց Եգիպտոսի բրիտանական հրամանատարությանը, որպեսզի զորք ուղարկեն գրավելու Կիլիկիայի ծովեզերքը՝ Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստները, Ադանայի դաշտը: Նա խոստացավ, որ լեռնագավառների հայերը կապստամբեն եւ կօժանդակեն դաշնակիցներին, եթե նրանց զենք ու զինամթերք տրամադրվի: Բրիտանական ուժերի ափհանումը կապահովեր տեղի հայության անվտանգությունը, իսկ հայկական ապստամբական շարժումը «աւելի կշիռ կը բերէր Կիլիկիոյ մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն»[5],- գրում էր նա Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեւորգ Ե Սուրենյանցին ուղարկած նամակում:

Այդ ծրագիրը հավանություն գտավ բրիտանացիների կողմից: Եգիպտոսում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջ. Մաքֆելը Պողոս Նուբարի հետ

5 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68:

քննարկեց Կիլիկիայում բրիտանական զորքերի ափհանման եւ հայերի աջակցության հետ կապված հարցերը: Հայ գործիչը վստահեցրեց, որ հայերը բրիտանացիներին կընդունեն որպես ազատարարների եւ ցույց կտան ամեն հնարավոր օգնություն[6]:

Թուրքիայի դեմ դաշնակիցների ռազմական գործողություններ ծավալելու անհրաժեշտությունը 1915 թ. սկզբին բարձրացվեց նաեւ Ռուսաստանի կողմից: 1915 թ. հունվարի 2-ին Ռուսաստանի գերագույն գլխավոր հրամանատար մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեւիչ Ռոմանովը դիմեց Բրիտանիային՝ խնդրելով Մերձավոր Արեւելքում ռազմական գործողություններ սկսել, որպեսզի թուլացնեն թուրքական բանակի ճնշումը Կովկասյան ճակատի ռուսական բանակների վրա[7]:

Անգլիական կառավարությունը 1915թ. հունվարի 13-ին քննարկեց Օսմանյան կայսրությանը հզոր հարված հասցնելու երկու ուղղություն: Ռազմական նախարար լորդ Հ. Քիթչենները գտնում էր, որ պետք է հարվածել Կիլիկիայի ուղղությամբ, իսկ ռազմածովային նախարար Ու. Չերչիլն առաջարկում էր հարձակվել Դարդանելի վրա եւ գրավել մայրաքաղաք Կ. Պոլիսը:

Հետաքրքիր է նշել, որ Հ. Քիթչենները անիրագործելի էր համարում Կ. Պոլիսը գրավելու ծրագիրը եւ առաջարկում էր ափհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, ներխուժել Անտիոքի դաշտ եւ շարժվելով հյուսիս-արեւելք՝ Դիարբեքիրի կամ Վանի նահանգներում միանալ ռուսական բանակին[8]: Նման գործողության հետեւանքով ցամաքային ուղիղ կապ կհաստատվեր Ռուսաստանի ու նրա դաշնակիցների միջեւ, կայսրության փոքրասիական տիրույթները կբաժանվեին արաբական ու քրդական երկրամասերից, իսկ Հայաստանի հիմնական մասը կհայտնվեր դաշնակիցների վերահսկողության տակ: Այդպիսով, իրական հնարավորություն կստեղծվեր, որպեսզի երկու մասի բաժանված Օսմանյան կայսրությունը անձնատուր լիներ կամ վերջնականապես կործանվեր:

Կ. Պոլիսը գրավելու նախաձեռնության հեղինակն էր Ու. Չերչիլը: Դրանով նա ցանկանում էր սեւծովյան նեղուցների վրա հաստատել բրիտանական վերահսկողություն՝ լավ իմանալով, որ այդ տարածքներին հավակնում է դաշնակից Ռուսաստանը: Նա դեռեւս 1914թ. օգոստոսին առաջ էր քաշել Դարդանելը հունական ուժերի միջոցով գրավելու գաղափարը: Սակայն Դարդանելի ուղղությամբ բրիտանական նավատորմի հարձակման նախագծին դեմ էր ծովակալ Ջ. Ֆիշերը, որն այդ քայլը համարում էր արկածախնդրություն: Դեռեւս 1914թ. նոյեմբերի 25-ին ծովակալության կողմից կառավարությանը ներկայացվեց Դարդանելի ուղղությամբ ռազմական գործողությունների նախագիծ, որը երկար ժամանակ քննարկման չարժանացավ[9]:

Թուրքիայի դեմ ռազմական խոշորածավալ գործողություն սկսելու Ռուսաստանի խնդրանքը քննարկելով՝ բրիտանական կառավարությունը որոշեց նախապատվություն տալ Ու. Չերչիլի նախագծին: Ծովակալությունը պետք է 1915թ. փետրվարին կազմակերպեր

6 Անդ :

7 Վ. Տրուխանովսկի, Ուինստոն Չերչիլ: Քաղաքական կենսագրություն, Եր., 1972, էջ 191:

8 Գ. Ահարոնեան, Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Լոս Անճելըս, 1986, էջ 61-62:

9 Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 49:

խոշոր հարձակում Գալիպոլի թերակղզու վրա, որպեսզի այնտեղից գրավեին Կ. Պոլիսը[10]: Մայրաքաղաքի գրավումով ակնկալում էին, որ Թուրքիան դուրս կգար պատերազմից, անվտանգ կդառնար Եգիպտոսը եւ Բալկանյան թերակղզին, իսկ Դարդանելի ու Բոսֆորի ռազմավարական մեծ կարեւորություն ունեցող նեղուցների վերահսկողությունը կանցներ Բրիտանիային:

Փաստորեն, Ռուսաստանին օգնելու պատրվակի տակ բրիտանական կառավարությունը որոշեց ոտնահարել ռուսական շահերը՝ լավ իմանալով, որ դա կգայրացնի դաշնակցին: Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը իր հուշերում գրում է. «Յուրաքանչյուր ռուսի համար նեղուցներին տիրելը ծառայել է եւ կծառայի ջերմ հույսերի ու ձգտումների առարկա»[11], ապա ավելացնում է. «Ռուսական պետության պատմական զարգացման գործընթացը չէր կարող ավարտին հասնել այլ կերպ, քան մեր տիրապետության հաստատումով Բոսֆորի ու Դարդանելի վրա»[12]: Բնականաբար, նեղուցների հարցում անգլիական հավակնությունները չափազանց բացասաբար ընդունվեցին ռուսական կողմում: Ս. Սազոնովը այդ մասին նշում է. «Որքան որ ես համակրում էի Թուրքիայի ու Բուլղարիայի միջեւ սեպ խրելու գաղափարին, այնքան էլ ինձ համար տհաճ էր նեղուցների ու Կ. Պոլսի գրավումը մեր դաշնակիցների եւ ոչ թե ռուսական զորքերի եւ Սեւծովյան նավատորմի միջոցով»[13]:

Հունվարի 19-ին տեղեկանալով Դարդանելի ուղղությամբ բրիտանական հարձակում նախապատրաստելու մասին, Ս. Սազոնովը պահանջեց դրանում ապահովել նաեւ ռուսական ռազմածովային ուժերի մասնակցությունը կամ հետաձգել արշավանքը: Սակայն Ռուսաստանի փոխարեն Ռ. Չերչիլը գերադասեց Դարդանելի օպերացիայում ապահովել Ֆրանսիայի մասնակցությունը[14]:

Փետրվարի 19-ին Դարդանելի օպերացիայի հենց առաջին օրը Ս. Սազոնովը դաշնակիցներից պահանջեց, որ հաջողության հասնելու դեպքում Կ. Պոլիսն ու նեղուցները անպայման հանձնեն Ռուսաստանին: Մարտի 17-ին Նիկոլայ Բ կայսրը կտրուկ պահանջ առաջադրեց դաշնակիցներին, որ նեղուցները անպայման պետք է հանձնվեն Ռուսաստանին եւ դրա դիմաց պատրաստակամություն հայտնեց ճանաչել բրիտանացիների հավակնությունները Մերձավոր Արեւելքում եւ Ֆրանսիայի իրավունքները Սիրիայում ու Կիլիկիայում[15]: Մարտի 27-ին Բրիտանիան նեղուցները Ռուսաստանին հանձնելու համաձայնություն տվեց, բայց միայն պատերազմից հետո, եթե վերջինս խոստանար բրիտանա-ֆրանսիական կողմին բաժին հանել ասիական Թուրքիայի հետպատերազմյան ժառանգությունից[16]:

1915թ. փետրվարի 19-ից մինչեւ 1916թ. հունվարի 9-ը տեղի ունեցած Դարդանելի ռազմագործողության ընթացքում ավելի քան կես միլիոնանոց բրիտանա-ֆրանսիական ուժերը անհաջողության մատնվեցի եւ կորցրին մի քանի հարյուր հազար զինվոր: Իսկ

10 Նույն տեղում, էջ 51:
11 Сазонов С., Воспоминания, М., 2002, ст. 270.
12 Նույն տեղում, էջ 275:
13 Նույն տեղում, էջ 288:
14 Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 52:
15 Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 246:
16 Сазонов С., Воспоминания, ст. 292-293.

Կիլիկիայում կարող էին հաջողության հասնել մի քանի անգամ ավելի փոքրաթիվ ուժեր ուղարկելով եւ, բնականաբար, աննշան կորուստներով:

Ինչպես տեսնում ենք, երկար քննարկումներից հետո, բրիտանական իշխանությունները որոշեցին ափհանում կատարել Դարդանելում եւ Կիլիկիան անուշադրության մատնվեց: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետեւանքով բրիտանացիները ծանր պարտություն կրեցին եւ մեծ զոհեր տվեցին, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման:

1915թ. փետրվարի 3-ին Պ. Նուբարը «Պատերազմը եւ Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսի բրիտանական իշխանություններին[17]: Նա խոստանում էր, որ կիլիկիահայերը կաջակցեն բրիտանական ռազմարշավային ուժերին, կընդունեն որպես ազատարարների եւ նույնիսկ ապստամբություն կբարձրացնեն լեռնագավառներում, եթե զենք ստանան:

Հայկական կոտորածների մասին լուրերի ահագնանալու հետ հայ գործիչները ավելի էին հակվում Կիլիկիայում հնարավորինս արագ զինված գործողություններ ծավալելու մտքին: Պ. Նուբարը համոզված էր, որ Կիլիկիայում անհրաժեշտ է զենքի դիմել նույնիսկ, եթե Դաշնակիցները օգնել չկարողանային: «Այսու ամենայնիւ, եթէ սպասեմք որ Պոլիսը իյնայ եւ անկէ յետոյ Դաշնակիցները Կիլիկեան ծովեզերքը զօրք հանեն, - 1915թ. հուլիսի 27-ին գրում էր նա Գեւորգ Ե կաթողիկոսին,- մինչեւ այն ատեն Կիլիկիոյ մէջ զուցէ բնաւ հայ չի մնար. որպի՛սի անդարմանելի չարիք: Ապա ուրեմն մեզ համար մահու եւ կենաց հարց է ուեւէ գնով արգիլել Կիլիկիոյ հայութեան կոտորածներն ու խմբական աքսորանքը»[18]:

Ազգային գործիչը այդ տեսակետին էր հանգել, երբ Ալեքսանդրիայից ստացել էր Ժ. Մութաֆովի հուլիսի 13-ին գրված նամակը[19]: Նամակագիրը նկարագրում էր Կիլիկիայում մեծ չափեր ընդունած զանգվածային տեղահանություններն ու ջարդերը, ինչպես նաեւ բողոքում էր Անտանտի երկրների անտարբեր վերաբերմունքի համար. «Ինչպե՞ս կարող են Դաշնակիցները, իրենց բոլոր մարդասիրական սկզբունքներով, մնալ անտարբեր եւ թույլ տալ մարդկության դեմ ուղղված այսպիսի մեծագույն ոճիր իրականացվի մեր դահիճների կողմից հենց իրենց աչքերի առաջ: Դատապարտյալները, փաստորեն, իրենց թշնամիներն են, եւ այս հրեշավոր տառապանքին վերջ տալու խնդրանքի իրականացումը բավական աննշան բան է համեմատած թշնամի երկրի այլ վայրերում գործադրած նրանց վերջին հսկայական ջանքերին:

Ճիշտն ասած, Դաշնակիցների այս անտարբեր վերաբերմունքը հենց այն պահին, երբ մեր ազգային գոյությունը Կիլիկիայում վտանգի տակ է, միշտ կմնա անհասկանալի՝ կարեւոր չէ, թե ինչ ռազմական, քաղաքական կամ ռազմավարական պատճառներ կարող են լինել:

Եվ այսպիսով, Ձերդ գերազանցություն, մենք չգիտենք էլ ինչպես խնդրենք ձեզանից Կիլիկիայի մեր եղբայրների անունից, որ Ձեր բոլոր ջանքերն ու եռանդն

17 Boghos Nubar,s Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 3-5.

18 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 69:

19 Boghos Nubar's Papers..., p. 161-162.

ուղղեք Դաշնակիցների անհապաղ զինված ներխուժման ուղղությամբ՝ ներխուժում, որն անհրաժեշտ է դադարեցնելու բնաջնջումը մի ամբողջ ժողովրդի, որի մեղքը քրիստոնյա լինելն է, քաղաքակրթությունը պաշտպանելը եւ Ֆրանսիայի, Անգլիայի ու Ռուսաստանի նկատմամբ իրական համակրանք ունենալը»[20]:

Ազգային պատվիրակության ղեկավարը, հուսահատված եւ դառնացած Անտանտի երկդիմի քաղաքականությունից ու սեփական ազգի անհուսալի վիճակից, հարցի լուծման տարբերակ էր համարում Կովկասյան բանակի հայ կամավորական գնդերի թվի մեծացումը եւ արագ երթով Կիլիկիա հասնելը[21]: Բայց դա անհնար էր իրականացնել, քանի որ հայ կամավորների թիվը բավարար չէր նման գործողության համար, իսկ թուրքերը դեռեւս բավական ուժեր ունեին նույնիսկ Կովկասյան ռուսական բանակի առաջխաղացումը կասեցնելու համար:

Համոզվելով, որ դաշնակիցները որեւէ իրական օգնություն ցույց տալու ցանկություն չունեն ոչնչացման եզրին հայտնված հայությանը, 1915թ. հուլիսին եգիպտահայերը կրկին բարձրացրին հայկական կամավորական զորամաս կազմավորելու հարցը, որը հարմար առիթի դեպքում ներխուժելու էր Կիլիկիա: Նախատեսվում էր Եգիպտոսում կամավորագրել 1.000 հայերի, նրանց միացնել Հունաստանից, Բուլղարիայից, Ամերիկայից եւ այլ վայրերից եկած կամավորներին, ինչպես նաեւ Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնի հայ մարտիկներին: Ձենք, զինամթերք եւ սպաներ պետք է տրամադրեին Անտանտի երկրները[22]:

Հուլիսի 20-ին Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուշագիր ներկայացրեց Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Ջ. Մաքսվելին: Նրանում արտահայտված է եգիպտահայության հուսահատությունը, դառնությունը եւ թուրքական վայրագություններին զոհ գնացող հայրենակիցներին փրկելու մեծագույն ձգտումը եւ ուղիների որոնումը՝ հատկապես սփյուռքահայության ռազմական աջակցությամբ: Կարծում ենք հետաքրքիր կլինի ծանոթանալ հուշագրին եւ այն մեջբերում ենք ամբողջությամբ:

«Հաստատելով մեր նախորդ ծանուցումը Կիլիկիայում ռազմական արշավանքի վերաբերյալ, մենք պատիվ ունենք ներկայացնելու մեր ազգային տեսակետը այդ մասին Եգիպտոսում Նորին Մեծության զորքերի գլխավոր հրամանատարին: Հաշվի ենք առնում, որ Կիլիկիայի ծովեզերքում ռազմաշավային զորքեր ափհանելու մեր խնդրանքը այս փուլում, թվում է, չի արժանանա հավանության Դարդանելի ռազմական գործողության պատճառով: Հաշվի առնելով, որ Սփյուռքի հայերը չեն կարող անտարբեր եւ անշարժ մնալ այդ երկրում ապրող իրենց հայրենակիցների սարսափելի դրությանը դեմ առ դեմ: Մեր կոմիտեն վերաձեւակերպել է իր ծրագիրը, որը մենք պատիվ ենք ունեցել ներկայացնելու ձեր հաստատմանը: Ամեն օր ավելի ու ավելի անհանգստացնող լուրեր են մեզ հասնում հայերի կոտորածների ու ճնշումների մասին, զանգվածային տեղահանությունները տարածաշրջանի հայ բնակչության ոչնչացման պատճառ կդառնան, եթե նրանց շուտափույթ գործնական աջակցություն ցույց չտրվի:

20 Նույն տեղում, էջ 162:
21 ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 69:
22 Boghos Nubar's Papers..., p. 164-165.

Այս նպատակով կամավորական խմբեր կազմավորելու շարժումը արդեն սկսվել է Ամերիկայում, Բուլղարիայում, Ռումինիայում եւ այլ հայկական համայնքներում: Մեր կոմիտեն որոշել է գլխավորել այդ շարժումը, բայց նախքան ազգային պաշտպանության ծրագրի իրականացումը, մենք վստահ ենք, որ մեր պարտքն է ապահովել Նորին Մեծության կառավարության թույլտվությունը: Համենայնդեպս, մենք չենք կասկածում, որ Ձերդ գերազանցությունը կհամաձայնի օգնել մեզ, պատշաճ կերպով գնահատելով փոքր ժողովրդի այս հայրենասիրական նախաձեռնությունը, որը չնայած թուրքերի կողմից ճնշված լինելուն, դեռեւս պահել է ազատության հանդեպ հավատը եւ որոշել է կատարել իր պարտքը՝ իր համեստ հնարավորություններով օգնության գալով ճնշված եղբայրներին:

Մենք անհապաղ խնդրում ենք բրիտանական կառավարության աջակցությունը եւս, այս նախաձեռնությունը հաջողությամբ ավարտելու համար: Մեր կարծիքով ռազմական իշխանությունները կարող են բերել իրենց աջակցությունը մեր կամավորների համար ապահովելով որոշ պայմաններ: Կարող են նրանց թույլ տալ հավաքվել Կիպրոսում, որը կարող է օգտագործվել որպես շտաբ Կիլիկիայում ռազմական գործողությունների համար: Կարող են տրանսպորտային միջոցներով ապահովել ափհանման նախօրեին: Եվ վերջապես կարող են նրանց տրամադրության տակ դնել ռազմամթերք եւ փոքր զորախումբ՝ ապահովելու այս նախաձեռնության հաջողությունը: Այսպիսով, Կիլիկիայի քրիստոնյա բնակչության աջակցությամբ, որը հուսահատորեն պարտիզանական պայքարի մեջ է մտել, հայերն ի վիճակի կլինեն պաշտպանել իրենց թուրքական դաժանություններից եւ նույնիսկ գրավել ռազմավարական նշանակության ռազմական դիրքեր: Կարիք չկա նշելու, որ այս ամբողջ շարժումը կլինի բրիտանական իշխանությունների ղեկավարության եւ վերահսկողության ներքո:

Այս ծայրահեղ ճգնաժամային իրադրության մեջ, որը մեծ փառապանք է բերում մեր ժողովրդին, մենք համոզված ենք, որ Նորին Մեծության բրիտանական կառավարությունը, հավատարիմ իր ազատական ավանդույթներին, չի թողնի այս դժբախտ, անօգնական ազգին գերմանա-թուրքական դահիճների ձեռքերում: Օգնությունը, որ մենք խնդրում ենք անհապաղ, ոչ միայն բրիտանական կառավարության ռազմական ծրագրերը կպահի անփոփոխ, այլեւ այն առավելությունը կունենա, որ կձախողի թուրքական կառավարության կենտրոնացված գործողությունները եւ կկտրի վերջինիս ուղիղ հաղորդակցության ուղիները:

Թույլ տվեք այս փուլի համար հիշեցնել Վանի օրինակը: Մի քանի հազար ապստամբների ու կամավորների հերոսությունը բավարար եղավ, որ ապահովի նահանգի գրավումը ռուսների կողմից, ինչպես նաեւ պաշտպանելու շրջակա փարածքների հայ բնակչությանը, որոնց վտանգ էր սպառնում քրդերի կողմից»[23]:

Այդ առաջարկությունը կրկին հետաքրքրեց բրիտանացիներին, քանի որ արդեն պարզ էր Դարդանելի օպերացիայի ձախողումը եւ իրենց հեղինակությունը Արեւելքում պահպանելու համար նրանք նոր ուղիներ էին փնտրում: Հավանաբար նրանց շահագրգռում էր նաեւ այն փաստը, որ հայ կամավորները բրիտանական զորքերի հետ մտնելով ու ազատագրելով Կիլիկիան կարող էին այնտեղ ապահովել Մեծ Բրիտանիայի հետագա ազդեցությունը, ինչից վախենում էին ֆրանսիացիները:

23 Boghos Nubar's Papers..., p. 194-195.

Ջ. Մաքսվելի պահանջով Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 24-ին ավելի մանրամասն ծրագիր ներկայացրեց[24]: Ըստ դրա, Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-ոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ բրիտանացիները ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերը ապստամբություն կազմակերպելու նպատակով գենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջանները: Հարձակման անցնելով՝ հայկական կամավորական բանակը գրավելու էր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից եւ 15.000 էլ շրջակայքից: Այդ 50.000-ոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլեւ շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էր համարվում գործողությունն իրականացնել արագորեն՝ կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Եթե բրիտանացիները անհրաժեշտ համարեին ավելի փոքրածավալ գործողություն իրականացնել, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ զորքը կարող էր մի կողմից գրավել Սուեզիան եւ Քեսաբը, ուր կար 25.000 հայ, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը Ալեքսանդրետի ծոցում, ուր կհավաքվեին եւ արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջողության դեպքում կարող էին գրավվել Ալեքսանդրետն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության դեպքում այդ ուժերը կարող էին կենտրոնացվել լեռներում եւ պարտիզանական պայքար մղել: Նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝ կտրելով հեռագրալարերը, քանդելով երկաթգծերը, այրելով կամուրջները եւն:

Իհարկե, դժվար է ասել, թե որքանով էր իրական 50.000-ոց հայկական կամավորական բանակ կազմավորելու նախագիծը եւ ավելի հավանական է, որ անիրագործելի էր տվյալ պահին: Փոքրաթիվ ուժերով ռազմական գործողություններ ծավալելու երկրորդ տարբերակը ավելի իրական էր եւ կարող էր լուրջ հաջողություններ ունենալ՝ փրկելով ծովեզերքի լեռնային շրջանների հայ բնակչությանը: Դրա վառ օրինակը Սուեզիայի կամ Մուսա լեռան հայերի հերոսական ինքնապաշտպանությունն էր:

Սակայն այդ ծրագրերն ուշացած էին եւ կիլիկիահայության փրկությունից հետո դրանք անիրագործելի դարձան: Չնայած բրիտանական կողմը հավանություն էր տվել վերոնշյալ ծրագրերին, սակայն դա հանդիպել էր Ֆրանսիայի դիմադրությանը, որը այլ ծրագրեր ուներ տարածաշրջանում: Հենց Ֆրանսիայի ցույց տված դիմադրությունն էր պատճառը, որ Կիլիկիայում ափհանում չկատարվեց եւ երկրամասը չազատագրվեց թուրքերից, չնայած թե՛ բրիտանացիները, թե՛ ռուսները դա համարում էին հնարավոր եւ անհրաժեշտ: Կիլիկիայի ուղղությամբ ռազմական որեւէ նախաձեռնության նկատմամբ Ֆրանսիայի անզիջում դիրքորոշումը այն կարեւոր գործոններից մեկը հանդիսացավ, որն ի վերջո հանգեցրեց Դարդանելի արկածախնդիր օպերացիան գործողության մեջ դնելուն:

1915թ. հունիսի 7-ին Պ. Նուբարը հանդիպում ունեցավ ֆրանսիական դիվանագետ Ք. Ժոննարի հետ: Վերջինս իր մտահոգությունը հայտնեց, որ Բրիտանիան միշտ հավակնություններ է ունեցել Ալեքսանդրետի նկատմամբ: Ժոննարը ձմռանը Եգիպտոսից

24 Նույն տեղում, էջ 203-204:

վերադառնալուց հետո անմիջապես հանդիպել էր Ֆրանսիայի նախագահ Ռ. Պուանկարեի հետ եւ պատմել էր, որ ֆրանսիացիների վրա ճնշող տպավորություն էր թողել այն հանգամանքը, որ բրիտանական ականակիր նավը մի քանի անգամ մեկնել էր Ալեքսանդրետ, մինչդեռ ոչ մի ֆրանսիական ռազմանավ այդ ուղղությամբ չէր շարժվել, չնայած իրենց համար որեւէ դժվարություն չկար նավատորմից որեւէ նավ ուղարկել այնտեղ: Նա նախագահի եւ կառավարության ուշադրությունն էր հրավիրել Սիրիայի նկատմամբ Բրիտանիայի նկրտումների հարցը եւ հետագա վտանգները, եթե վերջինս որոշեր Ալեքսանդրետում ափհանում կատարել առանց Ֆրանսիայի մասնակցության: Ժողովարի պահանջով ֆրանսիական ականակիր էր ուղարկվել Սիրիայի ու Կիլիկիայի ափերի մոտ[25]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի գործիչները դեմ էին բրիտանացիների կողմից Սիրիայի եւ Կիլիկիայի ուղղությամբ որեւէ ռազմագործողություն իրականացնելուն, քանի որ այդ տարածքները համարում էին իրենց ազդեցության գոտին եւ վախենում էին, որ Բրիտանիան կարող է դրանք սեփական ուժերով գրավել եւ չհանձնել Ֆրանսիային:

Այդ շրջանի ֆրանսիական քաղաքականության մասին պատմաբան Ե. Գասպարյանը գրում է. «Կիլիկիայում՝ Ալեքսանդրետի շրջանում լայնամասշտաբ եւ ինքնուրույն ռազմական գործողություններ մղելու եւ իր ծավալապաշտական խնդիրներն իր իսկ բանակների ուժերով լուծելու անընդունակ Ֆրանսիան ոչ միայն պարբերաբար եւ հետեւողականորեն մերժեց արեւմտահայությանն օգնելու բոլոր խնդրանքներն ու պատմության ընձեռնված հնարավորություններն, այլեւ, իր վրա վերցնելով հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության ու պատասխանատվության իր բաժին բեռը, այնքան ուժ, զորություն եւ կարողություն ունեցավ, որպեսզի հանուն իր ծավալապաշտական առաջնահերթ շահերի, շարունակ *խանգարի, արգելի եւ ձախողի* ինչպես իր դաշնակիցների՝ Անգլիայի եւ Ռուսաստանի, այնպես էլ հայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների կողմից արված ռազմական ու դիվանագիտական բնույթի այն բոլոր հրավերներն ու առաջարկները, որոնց իրականացումը կարող էր, նախ, շատ բանով կանխել հայոց ցեղասպանության գործադրումը, եւ ապա էականորեն նվազեցնել արեւմտահայության ողբերգության չափերն ու ընդգրկումները»[26]:

Դեռեւս 1915թ. փետրվարի 7-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը Փարիզի ռուսական դեսպանությանն ուղղված գաղտնի հեռագրով տեղեկացնում էր, որ Կովկասյան բանակի շտաբ են ներկայացել զեյթունցի պատվիրակներ եւ ինքնապաշտպանության համար զենք են խնդրել, քանի որ Կիլիկիայում կոտորածների սպառնալիքը մեծացել էր: Փոխարքան կարեւորում էր հարցի ռազմավարական նշանակությունը դաշնակիցների համար եւ անհրաժեշտ էր համարում անհապաղ պահանջված քանակությամբ հրացաններ եւ փամփուշտներ հասցնել Ալեքսանդրետի ծովածոցում սպասող հայերին: Նկատի առնելով այն հանգամանքը, որ Զեյթունի հայերի գործողություններն օգտակար կլինեին ֆրանսիացիներին, ելնելով նաեւ խնդրի անհետաձգելիությունից եւ այն փաստից, որ ռուսները հնարավորություն չունեն անմիջապես հայերին տրամադրել պահանջվող հրացանները, նա անհրաժեշտ էր համարում կապվել ֆրանսիական կառավարության

25 Boghos Nubar's Papers..., p. 85:
26 Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 81:

հետ եւ նշել, որ Ռուսաստանի համար ցանկալի է, որ ֆրանսիական ռազմանավերով Ալեքսանդրետ հասցվեր զենք ու զինամթերք[27]:

Սակայն փետրվարի 14-ին Փարիզի դեսպան Ա. Իզվոլսկին Ի. Վորոնցով-Դաշկովին տեղեկացրեց, որ Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն մերժել է, նշելով որ «ֆրանսիական կառավարությունը բացարձակապես զուրկ է Զեյթունի հայերին որեւէ քանակությամբ հրացաններ տրամադրելու հնարավորությունից, քանի որ Ֆրանսիան՝ ինքը դրանց խիստ կարիքն ունի»[28]: Այսպիսով, Ֆրանսիան գլացավ որեւէ օգնություն տրամադրել զեյթունցիներին՝ ինքնապաշտպանության համար:

1915թ. փետրվար-մարտ ամիսներին Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Բրիտանայի Սոֆիայի դեսպանների հետ ՀՅԴ Արեւմտյան Բյուրոյի անունից բանակցություններ սկսեց Մ. Վարանդյանը: Նա առաջարկում էր Ամերիկայում ու Բալկաններում հավաքագրել 15-20.000 հայ կամավորների, մարզել Կիպրոսում եւ այդ ուժերով ափհանում կատարել Կիլիկիայում: Չնայած դեսպանները հավանություն տվեցին այդ նախագծին ու ներկայացրին իրենց կառավարություններին, բայց Ֆրանսիան մերժեց նաեւ այդ ծրագիրը[29]:

Համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո Վերակազմյալ հնչակյան կուսակցության ԱՄՆ-ի մասնաճյուղերը տենդագին աշխատանքներ իրականացրին Կիլիկիայի ազատագրությունը իրականություն դարձնելու ուղղությամբ: 1914թ. նոյեմբերին Լոնդոն ու Փարիզ մեկնելով Դենի Կոշենի միջամտությամբ Ֆրանսիայի կառավարությանն էր դիմել Վերակազմյալ հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Վահե (Ալեքսան) Արզույանը[30]: Նա առաջարկեց Ֆրանսիայի օգնությամբ հավաքագրել ու Կիպրոսում վարժեցնել հայ կամավորների: Ծախսերի մի մասը հոգալու էին ամերիկահայերը: Հայ կամավորները եւ որոշ քանակությամբ ֆրանսիացի զինվորներ ներխուժելու էին Կիլիկիա, ուր նրանց էին միանալու 10.000 հայեր: Այդ ուժերը, ըստ հեղինակների, բավարար էին Կիլիկիան ազատագրելու համար: Սակայն Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն մերժեց այդ նախագիծը[31]:

Ստանալով Ֆրանսիայի մերժումը, Վերակազմյալ հնչակյանները, օգտագործելով մեծ հայասեր, լորդ Ջեյմս Բրայսի քաղաքական ազդեցությունն ու կապերը, դիմեցին բրիտանական կառավարությանը[32]: Սակայն այդ մասին տեղեկանալով, Ֆրանսիայի ԱԳՆ Արեւելյան գործերի բաժնի պետ Ժ. Գուն անմիջապես զգուշացրեց, որ իրենք դեմ են այլ պետության օգնությամբ Կիլիկիայում որեւէ ապստամբություն ձեռնարկելուն[33]:

Դարդանելի օպերացիայի ձախողումից հետո Բրիտանիայի ռազմական նախարար Ֆ. Քիթչենները եւ Եգիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար Ջ. Մաքսվելը նորից հակվեցին Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու գաղափարին: Նրանք փորձեցին այդ հարցում համաձայնության գալ ֆրանսիացիների

27 Նույն տեղում, էջ 39:
28 Նույն տեղում, էջ 41:
29 Նույն տեղում, էջ 39-41:
30 Պայքար, Բոստոն, 1935, հուլիս 16, 23:
31 ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, բ. 1, ց. 1, գ. 702:
32 Հովհաննիսյան Գ., Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Բանբեր Հայաստանի արխիվների, 2003, թիվ 1, էջ 189:
33 Չոպանյան Ա., Նամականի, Երեւան, 1980, էջ 120-121:

հետ: Ալեքսանդրետում ափհանում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ռազմագիտական հիմնավորումներով 1915թ. օգոստոսին Ֆրանսիայի կառավարությանը դիմեց նաև ֆրանսիական բանակի Գլխավոր շտաբի պետ զորավար Սարան: Բայց այդ նախագծի դեմ հանդես եկան ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար Ժոֆրը, վարչապետ Ռ. Վիվիանը եւ ռազմական նախարար Ա. Միլերանը[34]:

Թե որքան արդյունավետ կլիներ Կիլիկիայում կատարելիք ափհանումը, կարելի է եզրակացնել ծանոթանալով գերմանական մարշալ Լ. Հինդենբուրգի տեսակետին, որն իր զարմանքն էր հայտնում, որ Բրիտանիան ու Ֆրանսիան չօգտվեցին այդ անպաշտպան օղակից եւ շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային: «Այսպես վարվելու դեպքում,- նշում է ֆելդմարշալը,- նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանսպորտային երակը, որի վրայով թուրքական ուժերը, հանդերձանքն ու սպառազինությունները ուղարկվում էին Սիրիա, Միջագետք եւ մասամբ Կովկասյան բանակներին»[35]: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը եւս վախենում էր, որ հակառակորդները կարող են բացահայտել թուրքերի «թուլությունն այդ կրիտիկական կետում»[36]:

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում ափհանում կատարելու եւ այնտեղ հաջող ռազմական գործողություններ ծավալելու հնարավորությունը Անտանտի երկրները բաց թողեցին: Դա պայմանավորված էր Մերձավոր Արեւելքում Մեծ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի գաղտնի մրցակցությամբ: Ֆրանսիական գործիչները ցանկանում էին պատերազմից հետո Կիլիկիան միացնել իրենց գաղութներին, սակայն այդ պահին Արեւելքում բավարար զորքեր չունեին այդ երկրամասը սեփական ուժերով գրավելու համար: Ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում բրիտանական ու հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու ծրագրերին՝ վախենալով, որ կարող են այն կորցնել:

Երկրամասը գրավելու Ֆրանսիայի անկարողությունը եւ բրիտանական գրավման դեմ նրա հարուցած խոչընդոտները չափազանց ծանր հետեւանքներ ունեցան հայերի համար: Անտանտի զորքերի ափհանումը Կիլիկիայում կարող էր տեղահանությունից ու կոտորածից փրկել ոչ միայն տեղի հայությանը, այլ նույնիսկ կանխել Մեծ Եղեռնը: Բրիտանա-ֆրանսիական զորքերը Կիլիկիայից շարժվելով ռուսական բանակներին ընդառաջ՝ Թուրքիային կկանգնեցնեին երկու մասի բաժանվելու վտանգի առաջ եւ կստիպեին դուրս գալ պատերազմից: Նման պայմաններում թուրքերն ի վիճակի չէին լինի կազմակերպել այնպիսի հրեշավոր ոճիր ինչպիսին Մեծ եղեռնն էր, իսկ եթե, այնուամենայնիվ, որոշեին հայկական կոտորածներ իրականացնել, դրանք երբեք այն չափերն ու ահավորությունը չէին ունենա, ինչ եղավ:

Ցավոք, ճակատագիրը մեր ժողովրդին այս անգամ եւս չժպտաց եւ 1915թ. Կիլիկիայի ազատագրման հարցը մնաց միայն թղթային նախագիծ, իսկ կիլիկիահայերը ստիպված էին անցնել Մեծ եղեռնի մահաբեր ճանապարհը:

---

34 Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 48-49:

35 Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 2, Երեւան, 1983, էջ 68:

36 Նույն տեղում: